ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0009, Կորյուն 15, հեռ. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

Koryun Street 15, 0009, Yerevan, Republic of Armenia, tel. (37412) 77 77 40, info@cpcarmenia.am

ՈՐՈՇՈՒՄ N 2023/7
ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 4-Ի N 2023/6 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«05» հունվար 2024 թվական ք. Երևան

Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովը, կազմով՝ Լիլիթ Ալեքսանյանի, Տիգրան Ծատուրյանի և Արման Պողոսյանի (այսուհետ՝ Մրցութային հանձնաժողով), ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 40.2-րդ հոդվածով, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Աուդիտորական կազմակերպությունների ընտրության կարգը և նրանց ներկայացվող պահանջները սահմանելու մասին» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 17-ի N 02-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) Հավելվածով, ***որոշեց.***

1. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 4-ի N 2023/6 որոշման 3-5-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:
2. Աուդիտորական կազմակերպությունների ընտրության համար անցկացվող մրցույթների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի 2024

թվականի հունվարի 4-ի N 2023/6 որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-9-րդ կետերով.

«6. «Ֆոր Էյ Քնսալթինք» ՓԲԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2023/6, ԿՏՀԲՄԾ-2023/7 և ԿՏՀԲՄԾ-2023/8 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված մրցութային առաջարկները համապատասխանում են Որոշման Հավելվածի 39-րդ և 40-րդ կետերի պահանջներին:

7. «ԹՄ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ԿՏՀԲՄԾ-2023/6, ԿՏՀԲՄԾ-2023/7, ԿՏՀԲՄԾ-2023/8 ծածկագրերով մրցույթներին մասնակցելու նպատակով ներկայացված մրցութային առաջարկները համապատասխանում են Որոշման Հավելվածի 39-րդ և 40-րդ կետերի պահանջներին:

8. Մրցութային առաջարկների գնահատման նիստի օրը և ժամը նշանակել 2024 թվականի հունվարի 5-ին՝ ժամը 15:00-ին:

9. Սույն որոշման մասին աուդիտորական կազմակերպություններին ծանուցել վերջիններիս ներկայացրած հեռախոսահամարների միջոցով:»:

Մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Ալեքսանյան